

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՍԵՍԻԱՆ

Վերջերս տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական սե-

սիան: Սեսիան բացվեց Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանի ներածական խոսքով: Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ս. Ղարիբյանը զեկուցեց «Հայերեն լեզվի բաղաձայնական համակարգը» թեմայով: Զեկուցողը համեմատություն կատարեց հայոց լեզվի բարբառների յոթ խմբերի բաղաձայնական համակարգերի, ինչպես և զրաբարյան բաղաձայնական համակարգի միջև և եկավ այն եզրակացության, որ դրանք գտնվում են զարգացման տարրեր աստիճանների վրա, ընդ որում մասնավոր էլ զրաբարի չէ, որ ունի առավել արխայիկ համակարգ:

Տնտեսական գիտությունների դոկտոր Ս. Շ. Զուրաբյանը զեկուցեց հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման հիմնական ուղիների մասին: Նա ցույց տվեց, որ հայ իրականության մեջ մարքսիզմին անհրաժեշտ եղավ համառ ու վճռական պայքար մղելու իր թշնամի ուսմունքների դեմ: Զեկուցման մեջ բնութագրվեցին մարքսիզմի տարածման տնտեսական և զաղափարական նախապայմանները հայ իրականության մեջ, ինչպես նաև այդ պրոցեսի զարգացման մի քանի էտապներ. «Սոցիալիստական ռեվոլյուցիայի էտապները և ուշացման պատճառները Անդրկովկասում» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Հակոբյանը: Զեկուցողը մանրամասն բնութագրեց Անդրկովկասի տնտեսական ու քաղաքական վիճակը՝ Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի պահից մինչև սովետական կարգերի հաստատումն ընկած ժամանակաշրջանում: Այդ, շուրջ 3 տարի ընդգրկող և պատմական իրողություններով լի ժամանակաշրջանը զեկուցողը բաժա-

նեց երկու էտապի. Հոկտեմբերյան ռեվոլյուցիայից մինչև Բաքվի կոմունայի անկումը և կոմունայի անկումից մինչև սոցիալիստական ռեվոլյուցիայի հաղթանակը Անդրկովկասում: Զեկուցողն առաջ քաշեց ռեվոլյուցիայի հաղթանակի ուշացման երեք հիմնական պատճառ. Անդրկովկասի տնտեսական համեմատաբար հետամնաց վիճակը, Անդրկովկասի ազգային մասնատվածությունը, Նախիջևանի ստանական հակառեվոլյուցիոն պարտիաների՝ մուսավաթի, դաշնակցության ու մենշևիկների դործունեությունը: Այս հիմնական պատճառներին ավելանում էր մի կողմից օտարերկրյա ինտերվենցիայի փաստը Անդրկովկասում, մյուս կողմից՝ Ռուսաստանից անհրաժեշտ օգնություն ստանալու անհնարինությունը:

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Բ. Աղաբաբյանի զեկուցումը նվիրված էր սովետահայ գրականության ուսումնասիրության պատմության մի քանի հարցերին:

Արվեստագիտության դոկտոր Գ. Գ. Տիգրանովը զեկուցեց սովետահայ օպերային ստեղծագործության մի քանի հրատապ խնդիրների մասին:

Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Տ. Նրեմյանը զեկուցեց «Պատմական Հայաստանի քարտեզը ըստ Անանիա Շիրակացու» թեմայով: Նա տեսնելիքներին ներկայացրեց Պատմական Հայաստանի իր կազմած քարտեզը, որի վրա տեղադրված են «VII դարի աշխարհացույց»-ի տվյալները:

Սեսիան ավարտվեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Ստեփանյանի հաղորդմամբ՝ Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի նոր նյութերի մասին:

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԼԵԶՎԱՐԱՆԻ ՄԵԾԱՐՈՒՄԸ

Մեր ռեսպուբլիկայի գիտական հասարակայնությունը և մտավորականությունը ջերմորեն նշեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր-պրոֆեսոր Արարատ Սահակի Ղարիբյանի ծննդյան վաթսուներեք տարեկան, մանկավարժական ու հասարակական գործունեության 35-ամյակը:

Ավելի քան երեք տասնյակ տարիների ընթացքում Ա. Ս. Ղարիբյանն Լեզվաբանության (Երևանի, Թբիլիսիի, Բաքվի, Լենինականի, Ստեփանակերտի) բարձրագույն ուսումնական հաստատություններում դասախոսություններ է կարդացել ժամանակակից գրական հայերենի, հայոց լեզվի պատմության, գրաբարի, հայերենի պատմա-համեմատական քերականության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի մեթոդիկայի վերաբերյալ և գրել է մի շարք արժեքավոր ձեռնարկներ, դասագրքեր ու դասընթացներ: Նա ղեկավարել է բազմաթիվ ասպիրանտների, որոնք հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական թեզեր և աշխատում են ոչ միայն մեր ռեսպուբլիկայում, այլև նրա սահմաններից դուրս:

Բեղմնավոր է Ա. Ս. Ղարիբյանի գիտական գործունեությունը. նրա գրչին են պատկանում հարյուրից ավելի լեզվաբանական և հայագիտական աշխատություններ: Ղարիբյանի ջանքերով հայտնաբերվել և ուսումնասիրության են ներկայացվել շուրջ երկու տասնյակ հայ բարբառներ, վերջնականապես ճշտվել է բարբառների ու նրանց ճյուղերի ձևաբանական և հնչյունական դասակարգումը: Ա. Ս. Ղարիբյանի ղեկավարությամբ այժմ ծավալուն աշխատանքներ են տարվում հայ բարբառների քարտեզ և ատլաս կազմելու ուղղությամբ:

Նշանակալից են նաև Ա. Ս. Ղարիբյանի ծառայությունները բառարանագրության ասպարեզում: Նա գլխավոր խմբագիրն է «Ռուս-հայերեն բառարանի» (3-րդ և 4-րդ հատորների), Այժմ Լեզվի ինստիտուտի գիտական աշխատողների կոլեկտիվը, Ա. Ս. Ղարիբյանի խմբագրությամբ, հրատարակության է պատրաստում ժամանակակից հայերենի բացատրական և հայ-ռուսերեն մեծածավալ բառարանները: Նրա ջանքերով Լեզվի ինստիտուտում կազմվում է հայոց լեզվի լիակատար քարտարան, որն ունենալու է շուրջ 35 միլիոն քարտ և հատուկ բազա է հանդիսանալու հայագիտական ամեն կարգի գիտահետազոտական աշխատանքների համար:

Սույն թվականի հունվարի 27-ին, Ա. Ս. Ղարիբյանի մեծարժան Լեզվաբան, Հայկական ՍՍՌ

Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճն էին հավաքվել մեր ռեսպուբլիկայի գիտության և կուլտուրայի տարրեր բնագավառների բազմաթիվ աշխատողներ, ուսուցիչներ, Երեկոն բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, որը հակիրճ խոսքով բնութագրեց հորելյարի ստեղծագործական աշխատանքի անցած ուղին: Ա. Ս. Ղարիբյանի գիտական, մանկավարժական և հասարակական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Լ. Մելիսյան-Բենե:

Հորելյարին պատվոգրեր, նվերներ հանձնեցին և ողջունի ջերմ խոսքեր ասացին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Հ. Յուրիսյանը (Ակադեմիայի նախագահության և Հասարակական գիտությունների բաժանմունքի կողմից), Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրի տեղակալ Ս. Մովսիսյանը (Լուսավորության մինիստրության և բարձրագույն դրությունների և գիտական հիմնարկների աշխատողների արհմիության ռեսպուբլիկական կոմիտեի կողմից), Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Մկրչյանը (Երևանի Պետական համալսարանի ռեկտորատի և պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից), ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ե. Տեր-Միքայելյանը (Լեզվի ինստիտուտի կոլեկտիվի կողմից), Երևանի Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի դիրեկտոր Վ. Համազասպյանը (Մանկավարժական ինստիտուտի դիրեկցիայի և պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից), պրոֆեսոր Շ. Գաբրիելյանը (Վրացական ՍՍՌ ԳԱ Լեզվաբանության ինստիտուտի կողմից), Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Երեմյանը (Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի կողմից), ավագ գիտ. աշխատող, հին բուլղարի Արտո Նիկողոսյանը (Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի կողմից), Խ. Սարգսյանը (Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի կողմից), Հ. Մկրչյանը (Հեռակա մանկավարժական ինստիտուտի կողմից) և ուրիշներ:

Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի պիոներները ջերմորեն շնորհավորեցին Ա. Ս. Ղարիբյանի հորելյանը և նրան ընտանեկան իրենց պիոներական դրուժինայի պատվավոր անդամ:

Երեկոյին կարդացվեցին բազմաթիվ շնորհավորական հեռագրեր, որոնք ստացվել էին Միության տարրեր քաղաքներից՝ Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Թբիլիսիից, Բաքվից, Տաշ-

բենդից, Ալմա-Աթայից, Մինսկից, Վիլնյուսից և միութենական և ուսպուրիկական այս բաղարներին ու շրջաններին:

Հորելյարին ողջունի ջերմ խոսքեր Լին հղի աղանավոր գիտնականներ, լեզվաբաններ Վ. Վի-նոգրադովը, Հ. Օբելին, Ս. Բախտուրովը, Բ. Սերերեննիկովը, Ռ. Ավանեսովը, Գ. Մերե-րելին, Վ. Ժիրմունսկին, Ա. Չիբրովան:

Վ. Բաբկովսկին, Մ. Գիր-Ալիևը, Ա. Գեմիշի-ռադեն, Ի. Արուստան և շատ ուրիշներ:

Երեկոյի վերջում հորելյարը շնորհակալու-թյուն հայտնեց իրեն ցույց տված ուշադրու-թյան և պատվի համար, հավաստիացրեց, որ այսուհետև ևս մեծ եռանդով կաշխատի սովե-տական լեզվաբանության ու հայագիտության զարգացման համար:

Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՉՈՐՐՈՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1959 թ. հունվարի 6—8-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների չորրորդ համագումարը: Եզրմունքների կառու-ցումը և սովետահայ գրականությունը թեմա-յով հաշվետու զեկուցմամբ հանգես եկավ Հա-յաստանի Գրողների Միության վարչության պատասխանատու քարտուղար էդ. Թոփչյանը: Այնուհետև բացվեց մտերմ փոխանակություն, որին մասնակցեց 40 հոգի: Համագումարի աշ-խատանքներին Հայաստանի գրողներից, մտա-վորականության ներկայացուցիչներից, արդյու-նարբերական ձևաբանությունների աշխատող-ներից բացի մասնակցում էին նաև բազմաթիվ հյուրեր, որոնց թվում՝ ՍՍՄԽ Գրողների միու-թյան վարչության առաջին քարտուղար Ա. Սուր-կովը, Մ. Շահինյանը, Վ. Զվյագինսկան, Ե. Նի-կոլան, Լ. Սենգուզան, Գ. Մանասյանը (Մոսկ-վա), Գ. Նարիշկինը (ՌՍՖՍՌ), Օ. Շեստինսկին (Լենինգրադ), Կ. Գամախուրգիան, Ս. Շան-շիաշվիլին, Մ. Մրելիշվիլին (Վրաստան), Մ. Ռահիմը, Մ. Դիրազին, Հ. Հյուսին-Ջաղեն (Ադրբեյջան), Ե. Մատուզյավիչուսը, Ա. Իմեր-մանիսը (Լիտվա):

Համագումարում բնդարձակ ճառով հանգես եկավ Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնա-կան Կոմիտեի առաջին քարտուղար ընկ. Ս. Թով-մասյանը:

Չեկուցողը և ելույթ ունեցողները հանգա-մանորեն վերլուծեցին սովետահայ արձակի, պոեզիայի, դրամատուրգիայի, գրականագիտու-թյան, ինչպես նաև սփյուռքահայ գրականության արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Ցույց տրվեց, որ նախորդ համագումարից հն-

առ անցում չորս տարիների ընթացքում որոշակի տեղաշարժեր են կատարվել մեր գրականության այնպիսի կարևորագույն ժանրերի բնագավա-ռում, ինչպիսին զեկուրվեստական արձակն է և դրամատուրգիան: Զարգացման նոր աստիճանի է հասել բանաստեղծական արվեստը, դրական գործ է կատարել բնագիտությունը՝ նոր ստեղ-ծագործությունների գնահատման և գրականու-թյան հարցերի լուսաբանության բնագավառում: Սերտ կապեր են հաստատվել սովետահայ գրող-ների և արտասահմանի հայ առաջավոր գրող-ների միջև: Հայաստանում հրատարակվել են և ապագայում էլ լույս կրնան վառ արտասահ-մանի հայ գրողների լավագույն ստեղծագործու-թյունները:

Միաժամանակ նշվեց, որ այդ հաջողություն-ներով հանդերձ, սովետահայ գրականությունը, սակայն, ետ է մնում կյանքի առաջադրած պա-հանքներից: Այն դեռևս չի ստեղծել մեծարժեք երկեր բանավոր դասակարգի մասին, գրականու-թյան մեջ դեռ բիշ են այնպիսի կերպարներ, որ լիովին արժանի լինեն մեր դարաշրջանին, մրցեն դասական գրականության հուշարձան-ների հետ:

Համագումարը իր ընդունած բանաձևում ընդգծում է, որ այսուհետև ևս սովետահայ գրողները հավատարիմ կմնան սոցիալիստական ուսուցիչի ստեղծագործական մեթոդին, բազ-մակողմանիորեն կպատկերեն մեր ժողովրդի կյանքը, կկերտեն կոմունիզմ կառուցող մարդ-կանց լիարժեք գրական կերպարներ:

Ա. ՀԻՐՈՅԱՆ

ՀՆԴԻՍ ԳԻՏԱԿԱՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Կալկաթայի Հայկական կոլեջի տնօրեն Լ. Փոլատյանը անցյալ տարի հրատարակել է անդ-լերեն լեզվով մի գրքույկ, որ ունի հետևյալ վերնագիրը:

Address delivered by Dr. Suniti Ku-mar Chatterji, Emeritus Professor of Com-parative Philology, on the occasion of the Prize—Distribution Ceremony of the Ar-

menian College and Philanthropic Academy and Davidian Girls' School, held on the premises of the Armenian College, Calcutta, on February 7th, 1958 (Calcutta, Mullick Press, 1958, p. 19).

(Համեմատական լեզվաբանության գոկտոր-պրոֆեսոր Սունիթի Կումար Չեթերջիի ճառը Կալկաթայի «Հայկական կոլեջի», Հայկական Մարդասիրական ճեմարանի և Եփեփյան աղջկանց դպրոցի» մրցանակաբաշխության հանդեսին, 1958 թ. փետրվարի 7-ին: Կալկաթա, 1958, 19 էջ):

Կալկաթայի հայկական երկու դպրոցների մրցանակաբաշխության միացյալ հանդեսին, 1958 թ. փետրվարի 7-ին արտասանած իր ճառում հնդիկ նշանավոր լեզվաբան, պրոֆ. Դունիթի Կումար Չեթերջին մեծ համակերանով է խոսում հայերի, հայ ժողովրդի պատմության, լեզվի և մշակույթի մասին, որոնց նա լավ ծանոթ է: Պրոֆեսորը հայտնում է, որ իր պապերը և հետագայում ինքը, ապրելով Կալկաթայի «Սուրիաս» հայաբնակ փողոցում, կարողացել են մոտիկից ծանոթանալ իրենց հայ հարեաններին և սիրել նրանցից շատերին: Սուրիաս Սահիրի մասին հնդիկ գիտնականը մեծ համակերանով է խոսում:

Չեթերջին նշում է, որ հայերենը հնդեվրոպական լեզվախմբին է պատկանում և մի շարք հետաքրքիր համեմատություններ է անում հայերենի և սանսկրիտի բառապաշարի միջև:

Կումար Չեթերջին իր ճառում անդրադառնում է հայ ժողովրդի կրած ծանր տառապանքներին: Նա լավ ծանոթ է հայ ժողովրդի անցյալին, ճիշտ է բնութագրում Հին Հայաստանը որպես երկու հզոր պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև գտնվող փոքր երկիր, որն անընդհատ ոտնակոխ է արվել նրանց արշավանքների ժամանակ: Չեթերջին խոսում է նաև մոնղոլների, սելջուկների ու պարսիկների Հայաստան կառավարած արշավանքների մասին: Հիշելով Ռուսաստանի կողմից Արևելյան Հա-

յաստանի գրավման փաստը, պրոֆեսորը ընդգծում է, որ գրանով վերջ տրվեց հայ ժողովրդի մի հատվածի անասելի տանջանքներին և 1827 թ. հետո նոր դարագլուխ բացվեց հայ ժողովրդի համար:

Չեթերջին թույլիկ հայացք է նետում նաև Երևանյան Հայաստանի վերջին դարերի պատմության վրա: Նա գտնում է, որ Հայաստանի այդ մասը եվրոպական պետությունների ողորմածությամբ ամբողջովին թողնվեց սուլթանական բռնակալների տնօրինությանը, և դա չափազանց թանկ նստեց հայ ժողովրդին:

Մնալով առանց պաշտպանության, նշում է նա, հայերը ենթարկվեցին սոսկալի կոտորածների, հատկապես համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ, երբ երիտասարդ թուրքերը կանխամտածված կերպով փորձեցին ոչնչացնել Թուրքիայի ամբողջ հայությունը:

Հնդիկ գիտնականը մեծ հիացմունքով է խոսում հայերի, իբրև հին ժողովուրդներից մեկի մասին: Նա Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» համեմատում է Հերոդոտի պատմության հետ, բարձր է գնահատում հայ ժողովրդի մշակույթը և հատկապես շնչում է Սովետական Հայաստանում զարգացող հայերեն լեզվի դերը:

Իր ճառի վերջում Չեթերջին գոհունակությամբ է հայտնում այն բանի համար, որ ինքը այդ հանդիսավոր երեկույթին գտնվում է հայերի շրջանում, նա Կալկաթայի հայկական ճեմարանը համարում է Հնդկաստանում հայ մշակույթի կենտրոնը, որը հայ և հնդիկ կուլտուրական կապերի ամրացման գործում մեծ դեր է խաղում:

Հնդիկ գիտնականի ճառը ուշագրավ է նրանով, որ այդ ճառի մեջ արտահայտություն են գտել Հնդկաստանի առաջագետ մարդկանց մրտրերն ու զգացմունքները հայ ժողովրդի և նրա մշակույթի նկատմամբ:

ԱՍՏԵՐՈ